,, Այսօր հայ ձեռագիրները եթէ քննենք, նրանց $^{9}/_{10}$ մասը վանքերումն են գրուած, հեղինակուած և գոնէ արտագրուած (ըստ յիշատակարանացն) ։

,, Մի վայրկեան յետ նայինք, հաշուենք մեր ականաւոր եկեղեցականներն, որոնք ապրել են այս դարուս սկզբից մինչեւ վաթսունական թուականները, դրանք ամենքն էլ վանականներն են եղել ։ Նայենք և հաշուենք մեր այս օրուան հոգեւորականներին. ինչքա՜ն ազգատութիւն թէ քանակի և թէ որակի կողմից ։

,, Միթէ պարզ չէ՞ այս բոլորի հետեւանքը ։

,, Մեր սուրբ Եկեղեցին իւր մեծագոյն նեցուկներից մէկը վանականութիւնը, կորցնում է ։

,, Վանքերն ու վանականներն էին, որ Կիլիկեցոց ժամանակ թագաւորների, պապերի, խաչակիրների և նոյն իսկ ազգային կաթուղիկոսների ընդդէմ պաշտպանեցին մեր եկեղեցին և կորստից փրկեցին ։ Վանքերն ու վանականները վերապահեցին Ս- Էջմիածնի Հայրապետութիւնը ամենայն Հայոց ։

,, Վանքերն ու վանականները պահեցին մեր հին գրականութիւնը, ներմուծեցին տպագրութիւնը, խթան եղան նոր գրականութեան ։ Այս ամենից վերջը ինչ արինք մենք ։

,, Մենք վանքերը կործանեցինք, թող այսօր մէկը մատնացոյց անէ մի վանք. ուր միաբանութիւն կայ, ժառանգաւորաց դպրոց կայ և չէն է ։

,, Մենք ոչ մի վանք չունենք այսօր. հարիւրաւոր վանքերից, որոնք մի յիսնամեակ առաջ չէն ու կանգուն էին ։

,, Կառարկեն՝ որ Եւրոպացիք բռնի կործանում են վանքերը և ցրում միաբաններին, ուրախ լինինք որ մերերը խաղաղութեամբ և առանց բռնութեան են ոչնչանում ։

,, Այդպիսի ձրի ազատամտութեամբ, որ հաւասար է անմրտութեան, դատողներին չենք ուղղում մեր խօսքը, որովհետեւ նրանք ընդունակ չեն ժողովրդեան կեանքի պայմանները հասկանայու ։ Նրանք նման են այն բժշկին, որ առողջ և հիւանդ մարդուն միեւնոյն կերակուրն են նշանակում ։ Մեր խօսքն ուղղում ենք Հայ եկեղեցու լրջամիտ բարեկամներին ։